

## ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԶՈՒԱՆՇԻՐԻ ՎՐԱՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵԶ

(տպ. Վ. ԱՆՆԵՐԻ 1884)

Այս աշխատութիւնը՝ որ վրացերէնէ թարգմանուած է ժամանակակից դարերուն, ծանօթ էր ՆՀԲ-ի հեղինակներուն, որոնք բառացաղած են զայն: Զանազան պատճառներով առնուած չեն միայն երկու բառ, որոնց, ինչպէս նաև ուրիշ երկու բառերու վրայ, կ'ուզենք ընել մեր դիտողութիւնները:

### 1. Պասանիկ

Գնաց ընդ նմա և Ղոնկիանոս կարունացի և երթեալ զիպեցան աւուրն խաչելութեան: Եւ իրք պատառիկն պնդեաց զրեեռն, զմայր իլիոսի ընդուսուց մասն մարգարէութեան՝ որ ի նմա (էջ 52):

ՆՀԲ և Ալձեռն չգիտեն այս բառը: Պատմութեան հրատարակիչը կը հասկնայ «դահճ կամ բենող» և կը հանէ յն. ուստամշաւ (որ և ուստամշաւ) «ցիցի գարնել» բայէն: Այս մեկնութիւնը ուզիդ չէ:

Կու գայ պեհ. թանանիկ «պահապան» ձեւ մը, որ պահուած է մանիքէական զրութեանց մէջ բանական է թան: Արմատն է թան, պրո. շէ թան «պահ», որմէ և ձևակ թանբան «զիշերապահ»: Նոյն բառը փոխառեալ է նաև վրացերէնի մէջ, հմատ. ըստ Մառ ԹՅՕ 17,027 վրաց. պասանիկի (Վարք Ա. Նունէի, ձձ. պատահիղի), պասենակի (Պիդատոսի անվաերականին մէջ) «պահապան», պասերանի «օգնական» (ըստ Չուպինովի բառարանի), պասենարի «ծառայ, սպասաւոր» (Սուլխան Օրբելիանիի բառարանին մէջ):

### 2. Սեմիոր

Եղեւ ի նոսա ախտ սեմիորի (տպագրին մէջ սեմիորի, բայց ՆՀԲ ունի սեմիորի, որ աւելի ուղիղ է) և զիտացին թէ ի խաչէն է պատուասն (էջ 108):

ՆՀԲ այս բառը կը համարէ անստուգ: Զախարիսան և Ալձեռնը չեն յիշեր. Բրոսետ կը համարէ «dysentéries», իսկ վենետիկան հրատարակիչը հատուածը կը սրբազէ «եղեւ ի նոսա ախտ իմ փորի»:

Ըստ իս պարզապէս տառադարձուած է յն. սումֆօրի (կամ սումֆօրն) բառէն՝ որ կը նշանակէ «զանազան հիւանդութիւններու հաւաքում, réunion, rencontre de maladies» (յն. սումֆէրա «հաւաքել» բայէն): Ըստ այսմ հայ ձեւը պէտք է ուզգել սիմիորի:

### 3. Սրահանգ

Այս բառին վրայ խօսած էի Հայերէն նոր բառերու շարքին մէջ (Գլ. թ), բերելով վարդանէն և թւահայեցիէն մէկ մէկ վկայութիւն և ըստ Ալձեռնի ընդունելով սրահանգ «սրիկայ» նշանակութիւնը: Կը տեսնեմ որ այս նշանակութիւնը սիալ է, բանի որ Զուանշիրի պատմութեան մէջ կը գտնեմ երրորդ վկայութիւն մը, ուր սրահանգ չի կրնար ունենալ այսպիսի գէշ իմաստ մը. Յաւուրսն յանսսիկ զայ Մելիքը բան Սուլտանն... և թողեալ անդ ամիրայ վլըրահանզն... Զկնի աւուրց եկն Մրահանզն (էջ 114):

Մրահանց պրո. մահար սարհանց կամ մահար sarhang «յառաջընթաց զօրաց, բանակի զիմանոր», բառն է (կազմուած սար զուուի ահանց բառելէն): Այս իմաստով գործածուած է յիշեալ երկու վկայութեանց մէջ. նոյն բառն է զարգեալ այս երրորդ վկայութեան մէջ, ուր իրք յատուկ անուն առնուած է:

### 4. Փրոտիտոսիկ

Եւ կացոյց ի վերայ երկրին պատրիկ՝ որ է աւագ, զայր մի Մակեդոնացի՝ Ազոն կոչեցեալ. տուեալ նմա զօրս հարիւր հազար, որք էին փրոտիտոսիկ քաջակորովց և բանամարտիկը (էջ 20):

ՆՀԲ և Ալձեռնը չտնին այս բառը: Պատմութեան հրատարակիչը կը համարէ

յն, որուակեած քառաջնակարգ զինուրց՝ որ առ յոյնս յառաջնում գծի բանակին կարգէին»:

Այս մեկնութիւնը յարմար չէ. թէ՛ հայերէնի և թէ վրացերէնի մէջ յն. ուղարկող չէր կրնար շփոթուիլ մեր փ - ին հետ. Սակայն բացի նախատառէն՝ բարին մացեալ մասն ալ համաձայն չէ առաջարկուած յոյն ձերին հետ:

Բայտ իս փրոտիտոսիկ խանգարեալ զրչու-

թիւն մըն է և կը ներկայացնէ յն. գրօսքն «պահապան զօրց, պահակ» բարին մէկ ածանցը. ինչ, գրօսքդէ՛ն «պահապանուած», գրօսքն «պահել, պահակ կանգնիլ, պաշտպանութեան տակ առնել» ևն:

Սիսալը յառաջացած է նօտրագիր զրութեան մէջ որ և ո ձեւրուն չափազանց նմանութենէն. Պէտք է կարդալ փրուրիտոսիկ:

Հ. ԱՃԱՌԵԱՆ

## ՀՆԱԳԻՒՑՈՒԱՆ

### Ս Ր Բ Ա Ն Կ Ա Ր Ք

#### ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍԵՐԸՑ ԴՐԱՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Բնականուր թիւգանդական կայսերը իրենց դրամոց առաջին երեսին վրայ ունին իրենց դիմանկարը, և ընդդիմակողմը՝ առաւելապէս են սրբանկարներ սկզբնատառերով և խորագրով:

Գլխաւորաբար սրբանկարը կը ներկայացնեն թիսու Քրիստոս՝ այլևսայլ դիրքերով. Սարք կոյսր՝ առանձին կամ թիսուսի հետ. Հրեշտակ, Սուրբ, և երբեմն միայն խորագրեր (légendes), սկզբնատառեր (sigles), փակագրեր (monogrammes) և նշանագծեր (symboles):

#### Յիսուս Քրիստոս

Թէոդորա կայսրուհւոյն (1054) և իրեն յաջորդներուն՝ մինչև Յովհաննէս Բալէուլուր կայսեր դրամներուն ընդդիմակողմը նկարուած է թիսու Քրիստոս խաչի վրան IC-XC սկզբնագրերով:

Ակերսիս Աի (1081) դրամներուն վրայ՝ մինչև Յովհաննէս Բ. Խմմանուէլ Ա. կոմնենոս կայսրը նկարուած է թիսու՝ բազմած դիրքով. Խոկ ուրեի վրայ դրոշմուած

կը տեսնենք զՅիսուս՝ Յովհաննէս Էմմանուէլ Ա. կոմնենոս կայսեր դրամներուն վրայ:

Կան դրամներ որ ընդդիմակողմին վրայ ունին IC-XC սկզբնագրերս և միանգամայն ԿԵՅՈՒԹԵԻ խորագրերս և թիսուս այլ և այլ դիրքերով նկարուած. ինչպէս խաչի վրայ է Ակերսիս Աի իր կոստանդնուպոլէլ Ա. կոմնենոսի դրամներուն վրայ: Ունկայ կը գտնուի թիսու՝ Ակերսիս Ա.ի առանձին և իր որդւոյն հետ նկարուած դրամներուն վրայ: Յիսուս բազմած կ'երեկ՝ Անդրոնիկոս ծերուոյն դրամներուն վրայ, ուր նկարուած է երիտասարդ Անդրոնիկոսի հետ:

Ընդհանրապէս ոսկեղբամներու վրայ կայ խորագրերովս IHSYS XRISTYS REX REGNANTIVM նկարուած թիսու Քրիստոս՝ նմանապէս այլևսայլ դիրքերով: Յուստինիանոս Ա. կայսեր դրամներուն վրայ մինչև կոստանդնուպոլ ԺԲ. Մուրմախոս՝ թիսու Խաչի վրայ է, բացի Միքայէլ Ա.ի վերաբերեալ դրամներէն, որոնց վրայ կայ խորագիրս IHSYS